ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ բարոյական դաստիարակության նպատակը և խնդիրները

ՀՀ Շիրակի մարզ, <<Այգաբացի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի

Ուսուցչուհի Լիդա Համբարյան

Ղեկավար՝ Լաուրա Ավետիսյան

Ներածություն

Դաստիարակությունը հավերժական կատեգորիա է: Դաստիարակությունը դաստիարակողի և դաստիարակվողների նպատակաուղղված, նպատակասլաց գործունեության ընթացքն է, որի շնորհիվ լուծվում են դաստիարակվողների անձի ձևավորման, զարգացման հիմնախնդիրները: Դաստիարակության ողջ համակարգում հնագույններից է բարոյական դաստիարակությունը: Բարոյական դաստիարակությունը հասարակական գիտակցության ձև է, դաստիարակութան ընդհանուր համակարգի ամենակարևոր բաղադրամասերից մեկը:

Այս աշխատանքում ներկայացված է բարոյական դաստիարակության նպատակը և խնդիրները: Դաստիարակության նպատակի էությունը կատարյալ մարդու ձևավորումն է, նրա համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Բարոյական դաստիարակության կարևորագույն գործառույթն է հասարակական այնպիսի մարդու հավելումը, որը շարունակի յուրացնել հասարակության կողմից ընդունված նորմերը, բարոյական որակները, մշտապես կատարի բարոյական գործողություններ ու արարքներ, այնի այն ինչը համամարդկային է ու արժեքավոր: Անձի բարոյական դաստիարակությունը ու բարոյական զարգացումը կախված են տվյալ երկրի սոցիալական պայմաններից, այն հանրությունից, որում նա ապրում ու գործում է, և իհարկե, աշակերտների մոտ բարոյական զարգացման գործում մեծ դեր ունի դասղեկը: Բարոյական դաստիարակության գործընթացի հաջողությունն ու արդյունքը որոշվում են անձի արարքների ու գիտակցության միասնականությամբ:

Բարոյական դաստիարակության խնդիրները բազմազան են ու բազմաբնույթ: Ուսուցիչը պետք է կարողանա աշակերտների մոտ ձևավորել բարոյական այնպիսի բարձր որակները, ինչպիսին են հումանիզմը, ինտերնացիոնալիզմը, կոլեկտիվիզմը, հայրենասիրությունը, գիտակցական կարգապահությունը, քաղաքացիական դաստիարակությունը և այլն:

Գլուխ 1. Բարոյական դաստիարակության նպատակը

Դաստիարակությունը, որպես կենսաբանական բարձրակարգ էակի գործունեության տեսակ, հիմնական դրդապատճառներ ունենալով սոցիալ-տնտեսական պահանջմունքները, զարգացել է մարդու կայացմանը զուգահեռ: Դաստիարակության տեսությունը ուսմունք է դաստիարակության երևույթների, փաստերի, դրանց արտաքին ու ներքին կապերի, դաստիարակության սկզբունքների ու մեթոդների, դաստիարակության բովանդակության ու օրինաչափությունների, դաստիարակության կազմակերպման ձևերի մասին: Դաստիարակությունը դաստիարակողի և դաստիարակվողի նպատակաուղղված գործունեություն է: Կարելի է ասել՝ դաստիարակությունը նպատակասլաց ներգործությունների ամբողջական համակարգ է: Այն մանկավարժական գիտության շատ դժվարին բնագավառներից է, որն ունի մի շարք առանձնահատկություններ:

Առաջին առանձնահատկությունն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններն են: Օբյեկտիվ գործոնն այն պայմաններն են, որոնց գործում ապրում է մարդը, իսկ սուբյեկտիվ գործոնը դաստիարակողի արվեստն է՝ մանկավարժական վարպետությունը: 2-րդ առանձնահատկություն դաստիարակության արդյունքը միանգամից չի երևում: 3-րդ առանձնահատկությունը դաստիարակության երկարատևությունն է: Այն երկար ու ձիգ տարիների ներգործություն է, դասղեկի (դաստիարակի) աշխատանքի և ինքնադաստիարակության արդյունքը: 4-րդ առանձնահատկությունը դաստիարակության անընդհատությունն է: Այն նպատակասլաց, պլանավորող, անընդհատ ծավալվող գործունեություն է: 5-րդ առանձնահատկությունը դաստիարակության գործընթացի համալիր կոմպլեքսային բնույթն է: 6-րդ առանձնահատկությունը դաստիարակության երկկողմային բնույթն է, այսինքն՝ ուսուցիչ և աշակերտ: Վերջապես դաստիարակության գործընթացի 7-րդ առանձնահատկությունը նրա ամբողջական բնույթն է. Դա նշանակում է՝ դաստիարակվողներին դաստիարակել ոչ թե մեկ ուղղությամբ, այլ դաստիարակության ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասերի բոլոր

ուղղություններով՝ մտավոր, բարոյական աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական և այլն: [1]

Բարոյական դաստիարակությունը հասարակական գիտակցության ձև է, դաստիարակութան ընդհանուր համակարգի ամենակարևոր բաղադրամասերից մեկը: Բարոյական դաստիարակությունը սերտորեն կապված է դաստիարակության մյուս բաղադրմսերի հետ և մեծ դեր է խաղում անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար, ահա ինչու կարևոր է դասղեկի ժամերի ընթացքում ձևավորել աշակերտների մոտ բարոյական դաստիարակություն: Նրա հիմնական էությունը անձի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումն է: Այս երկու հասկացությունները փոխկապակցված են: Բարոյական զարգացումը կախում ունի բարոյական դաստիարակվածությունից, Իսկ վերջինս էլ՝ բարոյական զարգացումից: Մարդու բարոյական զարգացումը շարունակվում է նրա ամբողջ կյանքի ընթացքում: Այն չընդհատվող գործընթաց է: Բարոյական դաստիարակության գերագույն նպատակը ոչ միայն անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է, այլ նաև նրա կարևորագույն գործառույթն է հասարակական այնպիսի մարդու հավելումը, որը շարունակի յուրացնել հասարակության կողմից ընդունված նորմերը, բարոյական որակները, մշտապես կատարի բարոյական գործողություններ ու արարքներ՝ հօգուտ հասարակության և հօգուտ մարդու, անի այն ինչը համամարդկային է ու արժեքավոր: Բարոյական զարգացում ունեցող մարդը կոռեկտ է, պարկեշտ, առաքինի, բարեկիրթ:

Ժամանակակից երեխայի գործունեության, գիտակցության ու անձի զարգացման արմատական հարցերը քննարկվում են տարիքային ու մանկավարժական հոգեբանության կողմից, որի ինքնուրույն բաժիններից է դաստիարակության հոգեբանությունը: Դաստիարակության հոգեբանությունը ուսումնասիրում է այն հոգեբանական օրինաչափությունները, որոնց համաձայն, նպատակասլաց կերպով կազմակերպվաց մանկավարժական պրոցեսի ընթացքում տեղի է ունենում մարդկային անձնավորության ձևավորում:

Դաստիարակության հոգեբանությունը, բացահայտելով անձի բարոյական ոլորտի, բարոյական գիտակցության, բարոյական պատկերացումների, հասկացությունների սկզբունքների, համոզմունքների, արարքների բարոյական

---

[1] Ամիրջանյան Յու., «Մանկավարժություն» Երևան 2005 էջ 270

հիմքերը, բարոյական սկզբունքները, սովորույթների ու վարքի եղանակների հոգեբանական մեխանիզմները, ի հայտ է բերում մանկության տարբեր փուլերում դաստիարակչական պրոցեսի տարիքային բնութագրերն ու առանձնահատկությունները, մանկավարժական ներգործության ուղիների անհատական տարբերակները:[2]

Երեխայի ճիշտ դաստիարակության համար շատ մեծ նշանակություն ունի շրջապատը, սակայն ամեն դեպքում երեխան նախ դաստիարակվում է ընտանիքում, հետո՝ դպրոցում: Ծնողները՝ հայրն ու մայրը, պետք է լրջորեն զբաղվեն երեխայի դաստիարակությամբ: Երեխաների դաստիարակությունը բարդ, պատասխանատու, բայց շնորհակալ և հետաքրքիր զբաղմունք է, ուսուցիչները ևս պետք է լրջորեն մոտենան դաստիարակության գործին:

Ինչպես բարոյական վարքի սովորույթների դաստիարակումը, այդպես էլ բարոյական գիտակցման ձևավորումը բարդ գործընթաց է և ձեռք է բերվում մի շարք մեթոդների օգտագործումով: Դրանց միջոցով է դաստիարակ-ուսուցիչը հասնում այն բանին, որ երեխաները գիտելիքներ յուրացնեն բարոյականության և նրա կանոնների մասին, նրանց մեջ ձևավորվի բարոյական պատկերացումների, հասկացությունների և արժեքների համակարգ: Մտավոր հետամնաց երեխաների բարոյական գիտակցման ձևավորումն իրականացնելիս միշտ պետք է նկատի ունենալ որ նրանք օժտված են վստահության բարձր աստիճանով: Ուսուցչի խոսքը, նրա բացատրությունները, եզրակացությունները, որպես օրինաչափություն, կասկածի ենթակա չեն: Ուստի ուսուցիչը տիրապետում է լուրջ հնարավորությունների, որոնց շնորհիվ աշակերտների մեջ ձևավորում է անհրաժեշտ վերաբերմունք դեպի հասարակության բարոյական չափանիշները: Բարոյախոսական զրույցը բարոյական՝ գիտակցման ձևավորման մեթոդներից է, որով աշակերտներին մղում են դատողություններ անելու, արարքները վերլուծելու, գնահատականներ տալու: Դասղեկի ժամերի ընթացքում, այդ զրույցը պետք է երեխային հնարավորություն տա ըմբռնելու իմաստավորելու իր արաքները, դրանք համաձայնեցնի ընդհանուր ճանաչում գտած բարոյական արժեքների հետ: Դրանից բացի, այդ զրույցը պետք է ընդլայնի աշակերտների

---

[2] Պետրովսկի Ա. Վ., «Տարիքային և մանակվարժական հոգեբանություն» Երևան 1977 էջ 307

սոցիալական, բարոյական պատկերացումների շրջանակը, նրանց օգնի բացահայտելու յուրացրած պատկերացումների կապը առանձին անձանց արարքների, գործողությունների հետ: Երեխաների հետ անցկացվող բարոյախոսական զրույցը պետք է ուղղում, ճշգրտում մտցնի նրանց բարոյական պատկերացումների մեջ: Ցանկացած բարոյախոսական զրույց պետք է հստակորեն պլանավորված լինի: Դասղեկը նախապես պետք է իմանա, թե այս կամ այն թեմայի շուրջ կատարվող զրույցը աշակերտներին ինչ հիմնական մտքերի ու գործնական հետևությունների կհանգեցնի: Անհրաժեշտ է նաև, որ կանխամտածված լինեն աշակերտներին հետևողականորեն առաջադրվող հարցերի շարքը և նրանց պատասխանների մոդելավորումները, ընտրվեն այն նյութերը, որոնց վրա պետք է հենվել առաջադրված դրույթները ապացուցելու նպատակով: Բարոյախոսական զրույցը դաստիարակչական նշանակություն է ձեռք բերում միայն այն դեպքում, երբ որոշակի արձագանք է առաջացնում աշակերտների հոգում, նրանց ակտիվություն է հաղորդում: Բարոյախոսկան զրույց կազմակերպելիս պետք է հաշվի առնել այն փորձը, որ ունեն տվյալ տարիքի աշակերտները, այն բառապաշարը, հասկացությունները, որոնց կարող են ապավինել երեխաները: Պետք է ընդգծել, որ բարոյախոսական զրույցների հիմնական թեման աշակերտի վարքի կանոնների հետ է կապվելու:

Բարոյական դաստիարակության գործընթացի հաջողությունն ու արդյունքը որոշվում են անձի արարքների ու գիտակցության միասնականությամբ: Երեխայի մտքերի, հայացքների և կոնկրետ արարքների միաձուլման վճռական գործոնը նրա զգացումներն են: Առանց զգացումների ճիշտ դաստիարակման հնարավոր չէ բարոյական գիտակցման և վարքի համաձուլում: Ցածր դասարանների (1—3-րդ) աշակերտների մեջ ձևավորվում է հարգանքի զգացում մեծերի հանդեպ, կարգապահության, առաջադիմության, օրվա ռեժիմի պահպանման, թույլերին պաշտպանության տակ վերցնելու պատասխանատվության զգացումներ: Հնարավոր է դաստիարակել նաև լավ կատարված աշխատանքից բավականություն ստանալու, կենցաղում կարգուկանոն, մաքրություն պահպանելու հետ կապված զգացումներ: Միջին դասարանների (4—8-րդ) աշակերտների համար վճռորոշ է դառնում ընկերության, բարեկամության, ինչպես նաև ծուլության, ազնվության նկատմամբ

անհաշտության զգացումների ձևավորումը: Այս հասակում հատկապես կարևոր է, որ տղաների մեջ դաստիարակվի աղջիկների հանդեպ Հարգանքի, իսկ աղջիկների մեջ՝ սեփական անձի արժանապատվության և համեստության զգացումներ: 7-8-րդ դասարաններում սովորող պատանիների մեջ անհրաժեշտաբար պետք է ձևավորվեն այնպիսի բարձր բարոյական զգացումներ, որպիսիք են հասարակության հանդեպ շնորհակալության, թերությունների հանդեպ անհանդուրժողականության, թույլերին, անհարկի վիրավորվածներին պաշտպանելու պատրաստկամության զգացումները: Երեխաների մեջ մարդասիրության զգացում դաստիարակելը մանկավարժության հիմնական ուղիներից, նպատակներից մեկն է:[3]

Բարոյական դաստիարակությումը բարդ պրոցես է, որի հաջողությունը կախված է բարոյական դաստիարակության համակարգից, նրա տարբեր գործոնների ճիշտ զուգակցումից, անձի կյանքը, գործունեությունը և վարքագիծը խելացիորեն կազմակերպելուց:

[3] http://lraber.asj-oa.am/2523/1/1996-2(153).pdf

Գլուխ 2. Բարոյական դաստիարակության խնդիրները

Դաստիարակության ողջ համակարգում հնագույններից է բարոյական դաստիարակությունը: Ըստ էության երբ խնդիր առաջացավ դաստիարակել մատաղ սերնդի, այդ ժամանակից էլ բարոյական դաստիարակությունը դարձավ հրատապ և առաջնային: Պատահական չէ, որ բազմաթիվ գիտագեղարվեստական աշխատանքներում հաճախ «դաստիարակություն» հասկացության փոխարեն օգտագործում ենք «բարոյական դաստիարակություն», որի համակարգում էլ ընկալվել են դաստիարակության բազմաթիվ այլ բոլորովին վերջերս առանձնացած խնդիրներ:

Բարոյականությունը շատ բարդ հասկացություն է, դրա էությունը հասկանալու համար պահանջ է զգացվում այն շերտավորել, բաժանել մասերի ու գտնել այն եզակին, որը կարող է արտահայտել բարոյականության բովանդակությունը: Պարզվում է, որ այդպիսի եզակին արարքն է: Ուրեմն կարելի է ասել մարդու բարոյականության մասին դատում են նրա արարքներով: Արաքը գործողություն է: Նշանակում է՝ մարդու արարքն արտահայտվում է ինչ-որ գործողությունում: Սակայն գործողությունը դեռևս արարք չէ, քանի որ գործողության իմաստը, որը նրա ներքին կողմն է, մեզ հայտնի չէ: Հեռվից լսում ենք կացնի հարվածները, սա տվյալ գործողության արտաքին կողմն է, իսկ թե ինչու է կտրում ծառը՝ մեզ հայտնի չէ: Այսինքն, հայտնի չէ գործողության ներքին կողմը կամ կտրելու իմաստը: Եթե մարդը ծառը կտրում է անօգնական ծերացած մարդու վառարանի համար, դա, արդեն, կլինի այդ գործողության ներքին կողմը կամ իմաստը: Ուրեմն գործողությունն արարք է համարվում այն ժամանակ, երբ հայտնի է դառնում տվյալ գործողության ներքին կողմը կամ իմաստը: Գործողության իմաստից կամ նրա ներքին կողմից հայտնի է դառնում արարքի դրական կամ բացասական լինելը: Այսպիսով արարքն այն գործողությունն է, որի արտաքին և ներքի իմաստները բացահատվում են:

Արարքի իմաստը բնորոշում է այն կատարող մարդուն, նրա բարոյական զարգացման մակարդակը: Մարդու արարքների գումարից կամ դրանց ամբողջությունից ձևավորվում է նրա վարքը, որը տվյալ հասարակության մեջ գործող պահանջների ու նպատակների իմացության աստիճանն է և կիրառումը տվյալ անձնավորության կողմից: Այս դեպքում տվյալ վարքը կարելի է անվանել վարքի

կուլտուրա: Վարքի ու վարքագծի հիմքը արարքն է: Դաստիարակի խնդիրը պետք է լիանի դրական արարքների կատարումը դարձնել դպրոցականի մշտական սովորույթը, նրա բնավորության կայուն գիծը, որպեսզի նա ամբողջ կյանքում կատարի միայն ու միայն դրական արարքներ և դրանց հիման վրա ձևավորի իր վարքի կուլտուրան, իր բնավորությունը:[4]

Բարոյական վարքի ձևավորման համար պահանջվում է հատուկ ուշադրություն նվիրել բարոյական սովորությունների դաստիարակությանը, որոնցից են աշխատելու, ըկերական օգնություն ցույց տալու և կենսականորեն կարևոր այլ սովորություններ, որոնք նպաստում են անձի բարոյական որակների զարգացմանը: Բարոյական սովորությունները սկզբում ձևավորվում են մեծերին ընդօրինակելու և նրանց պահանջների ազդեցության տակ, կոլեկտիվ հասարակական կարծիքի ներգործությամբ: Կոլեկտիվ գործունեության պրոցեսում, բազմիցս կրկնվելով բարոյական սովորությունները աստիճանաբար դառնում են անձի պահանջմունքներ: Գիտակցելով բարոյական պահանջները, սեփական բարոյական իդեալները ձևավորելով և դրանք վարքի դրդապատճառներ դարձնելով, երեխաները նվաճած այս դիրքերից սկսում են վերաիմաստավորել և ընդհանրացնել իրենց փորձը: Բարոյական արժեքների գիտակցումն ու սիստեմավորումը բնորոշ են արդեն դեռահասության տարիքի համար: Իսկ ավագ դպրոցականին արդեն հատուկ է բարոյական համոզմունքների կենսական նպատակների ու հեռանկարների հարաբերականորեն կայուն համակարգը:

Երեխաների գիտակցության ու վարքի ձևավորումն իրականացվում է, ինչպես ընտանիքում, այնպես էլ դպրոցում՝ հատկապես դասղեկի ժամերի ընթացքում, անմիջական և միջնորդված դստիարակչական ներգործությունների ամբողջական համակարգի օգնությամբ: Սրանց շարքում նշանակալից տեղ են գրավում դպրոցականների բարոյական լուսավորության հնարները, որոնցից են անհատական և խմբային էթիկական զրույցները, դասախոսությունները, վիճաբանությունները, հանդիսատեսների և ընթերցողների խորհրդակցությունները և այլ մեթոդներ, որոնք դպրոցականին դրդում են առաջ քաշել և լուծել բարոյական խնդիրներ, դրանց վերաբերյալ սեփական կարծիքներ հայտնել, հետաքրքրվել ընկերների բարոյական

---

[4] Ամիրջանյան Յու., «Մանկավարժություն» էջ 358

դատողություններով և այլն: Անձի բարոյական ոլորտի ձևավորումը իրենից ներկայացնում է գիտակցության, վարքի, զգացմունքների ու սովորությունների զարգացման պրեցես:[5]

Բարոյական դաստիարակության խնդիրները բազմազան են ու բազմաբնույթ: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի, առաջին խմբի մեջ են դասվում անձի գիտակցության, զգացմունքների ու վարքի ձևավորումը: Երկրորդ խմբի մեջ են մտնում բարոյական բարձր որակները՝ հումանիզմը, կոլեկտիվիզմը, հայրենասիրությունը, գիտակցական կարգապահությունը, քաղաքացիական դաստիարակությունը և այլն:

Հմուտ ուսուցիչը պետք է բարոյական դաստիարակության ուղիներ որոնի, աշակերտների մեջ ձևավորի բարոյական հասկացությունները ճիշտ ըմբռնելու կարողություններ: Նա իր օրինակով պետք է բարություն ու համեստություն սերմանի: Շատ կարևոր են բարոյական թեմաներով զրույցները դասղեկի ժամերին: Նախօրոք լավ մշակված հարցերի միջոցով կարելի է քննարկել որևէ անձի արարքները, վարքագիծը, բնավորության գծերը, վերլուծել որևէ նկար, կարդացած վեպի հերոսների հոգեբանական առանձնահատկությունները և այլն:

Բարոյական դաստիարակության տեսական հիմունքները կազմում են բարոյականության համապատասխան որակները: Բարոյական դաստիարակության հիմնական էությունը անձի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումն է: Բարոյական դաստիարակության համակարգային խնդիրներն են.

1. բարոյական գիտակցության ձևավորումը
2. բարոյական կարողությունների ձևավորումը
3. բարոյական վարքի և գործունեության ձևավորումը

Բարոյականությունը հանդիսանում է հասարակական գիտակցության ձև և ավելի հին է, քան հասարակական գիտակցության մյուս ձևերը (կրոն, արվեստ, երաժշտություն և այլն):[6]

Վ. Ա. Սուխոմլինսկին գրում էր. «կրթված մարդկանց իսկական դաստիարակությունն ամենից առաջ մարդու, նրա հերոսական ոգու, հայրենիքին

---

[5] Պետրովսկի Ա. Վ., «Տարիքային և մանակվարժական հոգեբանություն» էջ 353

[6] http://kantegh.asj-oa.am/1726/1/238-246.pdf

անսահման նվիրվածության, համոզմունքներին հավատարմության, հանուն մարդու երջանկության և մտքի բոլոր հարստություններին տիրապետելու պատրաստակամության և հմտության իմացությունն է»[7]: Իհարկե, այստեղ Սուխոմլինսկին հիմնականում նկատի է ունեցել դաստիարակվածությունը, որը բովանդակում է հետևյալ որակների առկայությունը, բարությունը և հոգատարությունը շրջապատի նկատմամբ (մարդկանց, բնության, կենդանիների, հոգևոր արժեքների), ճշմարտագործությունը (խոսքի ու գործի), ազնվությունը (վարքի և գիտակցության), պատասխանատվությունը (գործի, մարդկանց, պարտականությունների), երախտագիտությունը (ծնողի, հարազատի, հայրենիքի նկատմամբ), նվիրվածությունը և այլն: Այս բոլոր որակները միաժամանակ բնութագրվում են որպես բարոյական դաստիարակության խնդիրներ, ուստի պատահական չէ, որ դաստիարակվածության մակարդակը բնութագրելիս օգտագործվում է «բարոյական է և առաքինի» բառակապակցությունը: Բարոյական դաստիարակությունն արտահայտում է դաստիարակության նպատակների ու բովանդակության ամբողջության կարևորագույն ուղղություններից մեկը:

Դպրոցականի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումը կախված են տվյալ երկրի սոցիալական պայմաններից , այն հանրությունից , որում նա ապրում և գործում է: Եթե դրանք իրենց բարձրության վրա չեն գտնվում , եթե չկան նյութական բարոյահոգեբանական նպաստավոր պայմաններ, քաղաքական առողջ մթնոլորտ, քաղաքակրթություն, ապա այնտեղ անձի բարոյականությունն ու բարոյական զարգացումը կայուն լինել չեն կարող:

[7] Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, էջ 395

Եզրակացություն

Այսպիսով, կարելի է ասել, որ դաստիարակությունը ավագ սերունդների կողմից նոր սերունդներին հասարակական-պատմական փորձի փոխանցման պրոցեսն է նրանց կյանքի ու աշխատանքի նախապատրաստելու նպատակով, որն անհրաժեշտ է հասարակության հետագա զարգացումն ապահովելու համար:

Բարոյական դաստիարակությունը հասարակական գիտակցության այն ոլորտն է, որը կյանքի բոլոր բնագավառներում մարդկանց վարքը կարգավորելու գործառություն է կատարում: Բարոյական զարգացում ունեցող մարդը կոռեկտ է, պարկեշտ, առաքինի, բարեկիրթ, այդպիսի մարդու նիստն ու կացը, գործողություններն ու արարքները, մարդկանց հետ հարաբերությունները, ամեն ինչի նկատմամբ վերաբերմունքը յուրահատուկ են և օրինակելի: Բարոյական դաստիարակության նպատակները ու խնդրները որոշվում են ինչպես ընտանիքում, այնպես էլ դպրոցում: Դաստիարակությունը հասարակական կյանքի համընդհանուր անհրաժեշտ կատեգորիա է: Բարոյական դաստիարակությունը ամեն մի հասարակության կարևոր ֆունկցիաներից է: Բարոյական զրգացմանը նպաստում են անձի շփումները, հաղորդակցումները, որոնք ներգործում են նրա գործողությունների, արարքների վրա, ձևավորում նրա անձը:

Բարոյական դաստիարակությունը մարդկանց բարոյական հատկությունների և վարքագծի կազմավորման նպատակասլաց պրոցեսն է, որը ձևավորում է անձի բարոյական գիտակցությունը, զարգացնում նրա զգացմունքները և համոզմունքները, մշակում վարքագծի հմտություններ ու սովորույթներ: Բարոյական դաստիարակությունը չընդհատվող գործընթաց է: Մարդը ենթարկվում է բարոյական դաստիարակության ազդեցությանը իր ողջ կյանքի ընթացքում, հատկապես մանկության, դեռահասության և պատանեկության տարիներին՝ ուսուցման շրջանում:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու., «Մանկավարժություն» «Մանկավարժ» հրատ. Երևան 2005
2. Պետրովսկի Ա. Վ., «Տարիքային և մանակվարժական հոգեբանություն» «Լույս» հրատ. Երևան 1977
3. http://lraber.asj-oa.am/2523/1/1996-2(153).pdf
4. http://kantegh.asj-oa.am/1726/1/238-246.pdf